Համացանցում ցանկացած առցանց գործարք կատարելիս հետևեք անվտանգության այս կանոններին.

1. գնումներ կատարեք միայն վստահելի խանութներից
2. գնում կատարելուց առաջ ուշադիր եղեք խանութի մասին կարծիքներին, մեկնաբանություններին և արձագանքներին՝ «search» դաշտում մուտքագրելով կայքի հասցեն+կարծիքներ
3. համոզվեք, որ կայքը գրանցվել է ոչ պակաս, քան մեկ տարի առաջ: Առաջարկում ենք ստուգել կայքի գրանցման վաղեմությունը https://www.nic.ru/whois/ կայքի միջոցով
4. հավաստի կայքերում պետք է հրապարակված լինեն տվյալ խանութի կոնտակտային տվյալները՝ գործունեության հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե, ապրանքի առաքման և հետվերադարձի մանրամասն տեղեկություն
5. խոշոր գնումներ կատարելիս ցանկալի է նախապես կապ հաստատել խանութի հետ
6. հավատացե՛ք միայն խելամիտ զեղչերին
7. ուշադրություն դարձրեք կայքի հասցեին, շատ հաճախ զեղծարարները փոփոխում են իրական կայքերի անվան մեջ մեկ-երկու տառ
8. ցանկալի է օգտվել https:/ -ով սկսվող և MasterCard SecureCode /3D Secure/ և Verified by Visa կայքերից
9. ուշադիր եղեք հայտնի մարդկանց և բրենդային խանութների անունից հրապարակված կեղծ շահումների հայտարարություններին
10. մուտքագրե՛ք քարտի դարձերեսին նշված և քարտապանին նույնականացնող եռանիշ կոդ: